



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material








ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒՅԻՒՆԵԱՆ

ԼՔՈՒԱԾ ՔՆԱՐ



Կ. Պոլիս  
Գրատուն Պ. Գ. Զարդարեան  
1902





10 NOV 2011



92758

ԼԲՈՒԱԾ ՔՆԱՐ





891.99

2-38

№ 9400

պ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

# ԼՔՈՒԱԾ ՔՆԱՐ



Կ. ՊՈԼԻՍ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԳՅԱՆ ԵՆ ԸՅԿ-

Պապր Ալի ճաստէի Թիւ 38

1902

150  
2758



10.06.2013

معارف نظارت جلیله سنک و مطبوعات داخلیه مدیریت علیہ سنک  
۳۶۲ نومرو لی رخصتیله طبع اولتمشدر .

ԼՈՒՍԱՂԲՕՐՍ

ԹԼԿԱՏԻՆՑԻԻՆ

# Մ Ո Ւ Տ Ք



## Հ Ս Ր Յ Ո Ւ Կ Ը

Քերթո՛ղ, ինչո՞ւ կը մտորիս ցրնդական  
Այդ ապերախտ արհեստին մեջ դժուարին .  
Բաւ չե՞ քեզ որ յուզմունքները՝ եսական  
Կուռի մը մեջ լոկ բուրնկին ու մարի՛ն:

## Գ Ն Բ Ր Ո Ղ Ը

Յուզուի՛լ ու մեծ անուշմենքովն իր անել՝  
— Ո՛վ միամիտ ու եսամոլ դու հարցուկ ,  
Ինչպե՞ս մարդոց լուռ կարաւանն հրգեցել . . . :  
Դու գիտե՛իր փառքի տեղանքն այս ծածուկ :

Ա՛, բոլոր բիւր գիներբուհներն աշխարհին  
Հոգուս մեջեն անցան ու հետք չը բողին .  
Մեծ կիրքերու ուխտաւորն եմ ես վերջին .  
— Ա՛յս է փառքի հուսկ երազը քերթողին :





# ԼՔՈՒԱԾ ՔՆԱՐ

---

## ԶԻՒՆՉԱԼԸ

---

Առափնութեան պէս ջինջ ու մտուր,  
Կը տեղայ ձիւնը երկինքէն խաղաղ :  
Յետոյ, քրնուտ ձիւնն սառ կ'ըլլայ ամուր,  
Ադամանդ տկուն, գոհար միապաղաղ :

Բոցէ արեւին սլաֆներ շեշտակի  
Կը քանդեն յետոյ սառն անզբբաբար,  
Եւ իբր արցունքներ ինկած հրեշտակի՝  
Ձիւն, սառ, կը հալին, կը հասնին իսպառ :

\* \* \*

Մարդն ալ կը ծընի ձիւնի պէս քրնուտ .  
Արցունք մը, նիչ մը՝ կ'ընեն զայն արի .  
Վիշտերն ու մահն ալ, — մական վիթխարի,  
Կը շախշախեն զայն, կը ջրնջեն անյուտ :

---



⊕ Գ Ա Ր Ն Ա Ն Ա Յ Յ Ի Ն Ե Ր Ա Չ Ա Ն Ք

Վարդ, շուշան ու այծսերերի . . .  
 Շուշան հերմակ ու վարդ կարմիր . . .  
 Այծսերերի շառագոյն . . .  
 Հոսաւեհում, բոյր անուշ . . .  
 Բոլորն ասոնց՝ զարնան հովէն հեւ ի հեւ,  
 Կու գան լեցուիլ իմ հոգուն մեջ առած քեւ :

Պլպուլ, սմբուլ,  
 Երգ ու բուրեան,  
 Դաւենակաւոր սողեր անդուլ,  
 Ու սերերներ բիւրաբոյր,  
 Ու առուակներ օձապրտոյ,  
 Լընակ, ալեակ եւ կապոյս,  
 Ուր կ'ոսոսեսն կայծ, բոյլ ու շող,  
 Ուր կը լցուք աւօտին ցօղ,  
 Ամենքն ալ զարնան  
 Շուրջ պար կը դառնան :

Ու կուսական լանջներու սակ  
 Ուր կեանքն առաս յորդան կուսայ,  
 Նիրհած յուզմունքներ, նըւաղուն յուտեր  
 Կը վերընձիւղին բաբախուն ու սաք,  
 Նուաղուն սերեր, ժգոյն սարսուռներ  
 Երազի սարսափ երանգներով լի :  
 Մինչ շքանց կարմիր բաւիթին վրան  
 Յորդ կիրքեր կ'այրին ու կը քրքրան :

Կ'ուռնանան ուռ,  
 Ընձիւղ, սերեր ու սարսուռ,  
 Ու կը ծաղկի ելրեւանին .  
 Յիշատակներն ալ կը ծաղկին սրբիս մեջ,  
 Յիշատակներն իմ յոյժ սիրոյ անցեալին,  
 Դեռ քարմ ու անեղջ :

Երկինքին խորն, ու ամպերուն,  
 Շա՛ս հեռուն,  
 Հոն են անոնք, յիշատակներն իմ սիրուն,  
 Հոն են անոնք, շուրջս են անոնք :

Վարդ, շուշան ու այծսերերի,  
 Շուշան հերմակ ու վարդ կարմիր,  
 Այծսերերի շառագոյն,  
 Հոսաւեհում, բոյր անուշ,  
 Պլպուլ, սմբուլ,  
 Երգ ու բոյր,  
 Դաւենակաւոր սողեր անդուլ,  
 Ու քիթուններ բազմաբոյր,  
 Ու առուակներ օձապրտոյ,  
 Լընակ, ալեակ եւ կապոյս,  
 Բոլորն անա կը բողբոջին  
 Բանաստեղծին արին վրան,  
 Իր շքներն ալ կը սարսրան  
 Յուզմամբն անոնց ներքողին :



## ՅԱՓՐԱՆՔ

Ո՞րը, զգուսն՞ք՝ թե անգուր հեռոքն անդարման  
 Լեռան կեանքի հորիզոնին կապուսակ .  
 Ո՞րը, յափրսն՞ք թոյլ կենցաղէն այս սափակ,  
 Թե՛ վնուական պէտքը՝ անդարձ բսծանման :

Ձեզ կը սիրե՛մ ամբողջ սիրով մ'անսահման,  
 Կապո՛յս երկինք, անսա՛ն, հովիտ ու վրտակ,  
 Ուր դեռածիլ կեանքիս ամբողջ հորձին ու սափ՝  
 Յօղն առած եմ իրենց առաս բողբոջման :

Այլ՝ իմ հոգուս անբաւական եմ, աւա՛ղ,  
 Ձեր վիժանուս հրապոյրներն անանուն,  
 Երբ ... կ'ըզզամ տեղո՞ւ եզական կիրքերուն... :

Այլ չեմ ասեր իեզ՝ անստի կեանք դանդաղ,  
 Մասդաւ կեանքի սիրուած աղջիկ անօրէն,  
 Գուցէ որ մը ես կարօտմամ իեզ նորէն :



## ԱՆՏԱՌԱԿԻՆ ՄԷՁ

Խոտերու բընփու մարմանդին վրայ,  
 Եթէ, մախուր ու հոծ բաւիտ բազմաստեւ  
 Ուր մեղմ սարսուռով, բուրոս ու թեթեւ  
 Ձեփիւռ մը ցրկեկ մերք կը սարսրուայ,

Կ'ընկողմսնիմ ես խորն անստակին,  
 Կիսասուերին մէջ լայն ու հոտաւէտ,  
 Ուր ցոլմունքներով նըբբանուրք, վէտ վէտ,  
 Կը ցանկ աւելն իւր տօգոյն ոսկին :

Եւ սաղարթներու խիտ ցանցին մէջէն  
 Որ կը փանդակուի կապոյտին վրայ,  
 Հոս հոն՝ երկինքը ջի՛նջ, կը սարսրուայ,  
 Ու սարսամ ձայներ անո՛ւտ կը մընջեն :

Շահէն մը կ'անցնի խիզախ բրոնչով,  
 Ու կ'երբայ հեռուն գաւառնիլ անցած .  
 Ու նընդուկներն ալ նըկուն, բազմավարժ՝  
 Բիւր ձեւեր կ'ընեն պուրակներուն փով :

Հոգուս մէջ կ'իյնայ սարսամը անհուն  
 Գիւնով խնդուրեան լուռ երազանքին,  
 Անձանօթ շող մը, հորձ մը կարողին,  
 Կապոյտ վերայման պարսաւմ մը բրբուն :



Մեկ երկու անգամ կ'երգէ մի պլպուլ .  
Ինչ վանկ , մեղմ շեշտեր ու բիւր ելեւեղ :  
Հիւժուած հոգի մը այդ վանկերուն մէջ  
Կ'ըսէ՛ք՝ քրքուալով կը հասնի անդուլ :

Ու յետոյ խաղաղ լուռը վերբսին .  
Ու կես երազներ , ու կես երանգներ .  
Սըլացքի պատրանք յորդ կապոյտն ի վեր՝  
Հոն՝ ընկողմանած՝ գոգը մարմանդին ,

Նոսերու կանանց մուսակին վրայ ,  
Կիսասուերին մէջ լայն ու հոտակէս ,  
Յոյժուններու մէջ նըրբանուրբ , վէս վէս ,  
Ուր ցուրտ գեփիւն մը մերք կը սարսըռայ :

⊕ ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐՈՎ

Մայիսի գիշեր , լուսասփիւն գիշեր ,  
Դո՛ւ , լուսնակ գիշեր ,  
Ու լեռան հովիկ , դաշտերուն հովիկ ,  
Անտառին հովիկ ,  
Դո՛ւն , շուշաններու , դուն լեռան ծաղկի  
Քաղցրաբո՛յր հոգի , —  
Դու՛ք՝ դաշտակուրթեան մասնիկներ քրքուուն  
Ամբողջին անհուն :

Դու , պարուրածել շրդաբեւ ամպիկ ,  
Փրփուրէ ամպիկ ,  
Ու լուսաւորներ ոսկի արցունքով ,  
Լուսնա՛կ մեխանու , —  
Դո՛ւք , ո՛հ , ի՛նչ անուտ , դո՛ւք , ո՛հ , ի՛նչ անուտ . . . :

Ու կիսամըշուտ , ըսուերոտ ու լայն  
Հորիզոն քափուր ,  
Իմ գեղջուկ կեանքի շրջափակ սրխուր  
Դուն՝ այնքան անհուն , դուն՝ այնքան անձուկ ,  
Դուն՝ այնքան տարած , —

Ո՛հ , այս մայիսի լուսնակ գիշերով ,  
Հովանուտ ու զով ,  
Ես կը սիրեմ ձեզ , — որքա՛ն կը սիրեմ , —  
Դու՛ք՝ որ այս պահուտ  
Փրփրած հոգուտ  
Կը խօսիք երազ ու սեր կը խօսիք :

Ո՛հ , կը սիրեմ ձեզ , հոգ չէ քե նորէն ,  
Ձանձրացած , աւա՛ղ , ձեր միտքինսկ հրապոյրներէն ,  
Ձեզ պիտի ասեմ , ձեզ պիտի մոռնամ հոգիիս խորէն :



## Ի Ս Կ Ր Օ Ն Ք Ս

Չէ՛, ես չեմ ուզեր իդնով նիւթական  
Սրբել քեզ, անուշ, գեր լանջփող համար,  
Ու նրկուն մարմնիդ գանձերն անհամար՝  
Չե՛ն սիրոյս բոցին կայծն սկրգբնական :


Մըքիս պատշուժի ձայներն ու պապակ՝  
Դարձած են քեզի՛ քու պատկերիդ քով,  
Ու քեզ կը սիրեմ պատշելու կիրճով,  
Սուրբ սիրամօր մը սիրովն անպարփակ :

Ու պատկերդ անուշ, սրբուն, արտաքէկ,  
Մըքիս մեջ տարտա՛մ, կ'ուրուականայ լըռիցն,  
Որուն իմ աչքերն անխախտ կը յառիցն,  
Չուշտով անկէ բաժնուիլ երբեք :

Հրապոյրներուդ հաղցուրեան անբաւ  
Գաղափարացումն է զոր կը սիրեմ,  
Վերացումն անբիծ այդ ուժին վրսեմ՝  
Որուն իմ հոգիս բըմունիին եղաւ :

Խորհրդանրեանն ես համատեսեմ՝  
Սիրոյ հաւատքիս ուժգնութեան բոլոր  
— Մախուր կըրօնք մը, հաստատ, անմոլոր,  
Ու խուսափական հանոյցներէ վեր :

Բայց ըստասուժին մեջ անապագայ  
Այս պատշամունքիս հատուցման անուշ  
Իմ յուսավրեայ սրբիկին անուժ՝  
Այս խիստ հաւատք մերթ ծանր կուգայ :



## Կ Ա Յ Ն Ա Ղ Բ Ի Ի Ր

Ա.

Մայիս եօթը . մըքընշող է .  
Դեռ արեւը չէ ծագեր .  
Այլ արեւոյսը կը մաղէ  
Տժգոյն ցոյք մը ոսկեհեր :

Վր ծաւալին բուրմունքներ բիւր ,  
Գարնան շունչերն անարատ :  
Գինովութեամբ մը համապիւր՝  
Լի է աշխարհ կենսառատ :

Դեռ քոչնիկը նոր է զարբեր  
Սաղարթներուն գոգը հոծ ,  
Լեռան կողին՝ կ'երագէ դեռ  
Դեղն՝ անուշ մը ոսկեգոծ :

Դեռ հազիւ քէ կարմիր հողով  
Ծեփուած հինգ տասն երգիք՝  
Կը ծածանին մուխեր հողով ,  
Ձխաղաղն ալ ջի՛նջ կ'երգէ :



Այլ այս խաղաղ մըրընշաղին ,  
Գեղի մեկ մեծ կալին քով ,  
Արդեօք ինչո՞վ է կ'ըզբաղին  
Խուժք մը կիներ , խուժք մը կով :

Թարմ ուռուզեր նոր հարսեր կան  
Սոքսած շալվարք մեջքին ,  
Զընան կտոր է իգական  
Մերկ ու քննուլ սըրունքին :

Ու քանիկին հասուն կիներ ,  
Թեզնիք սոքսած շապկընուն ,  
Զեռուրնին մոմ , խունկ ու նըրէր ,  
Ճամբայ կ'եղենն դեպ հեռուն :

Ու քե փախչիլ մօր ետեւէն  
Կայտառ հորքիկ մը նգնի ,  
Կը զապէ զայն նուրբ , ձիւնեղէն  
Յոյր բազուկ մը հողանքի :

Կ'երգեն ուրախ ու խնդազին . . .  
Նուռէ քաւիքն ալ քամուկ  
Իրենց քննուլ , քարմ շըրքունքին՝  
Զինչ հաւաստով է քամուկ :

Բ.

Անտառին մեջ , գեղէն հեռու ,  
Ժայռի քալէն վիթխարի ,  
Կանանչ գոգէն մամուռներուն՝  
Կարնաղբիւրը կը բորի :

Ա՛լ կարաւանն այս գեղջկական  
Սուրբ հաւաստով արբեցած ,  
Անտառին մեջ ասպընջական՝  
Ուխտասեղին է հասած :

Եւ արշալոյսը կը սեղայ  
Գոհար , մարգրիս ու ոսկի ,  
Սաղմոսե՛նք . — «Տէ՛ր, ես քեզ մեղայ .»  
— Պահն է խունկի , աղօթքի :

Ու կը խմեն կարնաղբիւրին  
Զինչ ու գոհար ջըրերէն ,  
Աչք ու երես անով կ'օծուին ,  
Կը լըւացուին նեւօրէն :

Կար չունեցող ծրծկաններուն  
Քա՛յ է կարմիր ենթարին  
Լանջեր լեցուն , ծիծեր սիրուն՝  
Ուխտ են քրէր այս ջըրին :

Մըսուս կուրծքեր , որոնց վըրան  
Կարմիր վարդեր կը վառին ,  
Կը սըսփան , կը սարսըռան  
Յուրս համբոյրէն սուրբ ջըրին :

Ու կովերն ալ լուացուած են ,  
Եւ ուխտն ալ վերջ է գրէր ,  
Առան կաքի յոյս կը քածեն  
Ուխտ սւռններն անձնուր :





Երբ տուն դարձան՝ գարնան կարմիր  
 Կայտառ արեւն էր ծաթեր,  
 Երիտասարդ հովիւն ալ ժիր՝  
 Ոչխարները կը կրթէր :

### ԱՐՅՈՒՆՔՈՏ ԽՕՍՔԵՐ

Զմայլանքի մեջ անպատում ու լայն՝  
 Ինչ հեռոս է ինձի, աղուո՛ր, դիտել քեզ,  
 Դիտել պատկերըդ հեռուէն միայն,  
 Կրօնքի մարդոց պատկառանքովն հեզ :

Ձե՛, դուն հող կեցիր, միտս անհպելի  
 Այդ վերացումի սուրբ երկինքին մեջ,  
 Հոն բող հայուածքդ շողշողայ, փայլի,  
 Իբրեւ լուսեղէն հրբոս մը անտեղ :

Հոն, բարձրութեան մեջ, հեռու, շատ հեռու,  
 Անբժուրեան մեջ, լոյսի մեջ քարախ,  
 Ուր ոսկեծայիտ գեր լուսիններու  
 Աւխարն մը կ'ապրի օդին մեջ առկախ :

Լաւ է ինձ պատեել քեզ այդ սեղ միայն,  
 Իմ հողիս քեզի խնկել դեպ ի վեր,  
 Ու յափօսակուած, ամփոփ ու անձայն  
 Արքիս սեղեւունն սալ աւխուծ քելեր :

Ու ծայտէ՛ ինձի սիրոյս փոխարեւն  
 Ժպիտով մ'աղու ու ոսկեփրփր,  
 Եւ սիրոյ խօսքեր ցանկ՝ ինձ վերէն,  
 Մանկունակ, անուշ, պարզ ու միամիտ :

Բայց երբ մերք հողիս սեղոտս պաղով,  
 Դժգոհ այս անմեղ, անյոյս խաղերէն,  
 Ուզէ մօտեմալ շրթունքներուդ հով,  
 Ու գգուել անոնց բաւիւն յամբօրէն,

Այդ յայտատ արժուանք ինձի մի՛ բոյլ սար,  
 Ու դուն հող կեցիր միտս անհրպելի,  
 Մինչեւ անլ անյոյս ու անմըխիթար՝  
 Ըսպառի հողիս, մոմ ըլլայ, հալի՛ :

### ՍԱՐԵՐՈՒՆ ՎՐԱՅԷՆ

Գարնան բոցափայլ վարդ արեալոյսով,  
 Լեւան բարձրաբերձ սարերուն վրայ  
 Քեւ կ'առնէ ազատ ու կը սարսըռայ  
 Քարմ շունչը հովին հոտաւտ ու զով :

Լոյսեր բազմեանց, — հոյլեր ցոլցրումն,  
 Ոսկեփոռի լայն ցրուումներով,  
 Վանձեւէն երկայնքն անգայտ ամպերուն,  
 Գարնան բոցեղէն այս արեալոյսով :





Ու նանանչներու բիւր ցրուումներէն  
Չորակին մեզը կ'անգայտի սակաւ ,  
Ու ծաղիկներն ալ հեշիւ կը բուրեն  
Քաղցր բոյրերու խառնուրդ մը անբաւ :

Հեռո՛ւն , ձորերուն , լեռներուն ետեւ՝  
Լա՛յն , անհուն ծովը՝ մօտիկն ամպերուն . . .  
Ուր կը բեկբեկին երկինքն ու գարուն ,  
Ու կը շողշողան կսպոյն ու արեւ :

Չորակին խորը , ծառերուն մեջէն ,  
Լայն ու ծաւալուն բսուերներուն սակ ,  
Ձինջ , ականակիտ ակերն ու վրսակ՝  
Արծաթե երգեր , մեղմ , կը դդրջեն :

Ու լեռան ազատ այս վեհ սարերէն  
Պիտ կը նկատեմ անհունը վրսեմ ,  
Ուր գեղեցկութեան քեւեր օդանեմ  
Բիւր հրմայներով զիւր կը պարուրեն :

### ՏՐՏՍՈՒՅԵԱՆ ԱՆԴՐԻՆ

Իմաստաւորի լրջութիւն մը լուռ  
Կը ցոլայ անփայլ իր դեմքին վրայ ,  
Եւ ներքին վիճի լեռդ ծիծաղ մը սուր՝  
Շրթունքներուն շուրջն հոն կը քրքրայ :

Չը կայ աչքերուն անգրագարձ փայլին ,  
Յուրս բիւրեղին մեջ՝ լրճումն յուսահատ .  
Եւ այդ սեւ , պղտոր , ալեծուփ հայլին  
Չի ցոլացրներ մահուան դեմքը վատ :

Պահձու կիրքերու եւ կամփի ուժեղ՝  
Հով մը կը սահի իր վեհ հակասէն ,  
Ու բրոնաբարուած սենչի յորդագեղ  
Յաւոտ պեղումներ զանի կը պատեն :

Այդ նայուածքին մեջ կեանքի լայն սիրոյն  
Չը փոխարինուած իդձը կայ լրճին .  
Ու մագնիսացած ասեղի հանգոյն  
Իր սրտում աչքերն անոր կը յառին :

Անոր կը յառին , կեանքին կը յառին ,  
Այս խեղձ՝ այլ սիրուած անգութ աղջկան ,  
Ու մի՛ զարմանաք թէ իր մուսային  
Երգն ըլլայ կրփոս ողբ մը սրտական :

### X ՅԱՄ ՉԱՅՆՈՎ ԽՕՍՔԵՐ

Ինչ որ ունիմ արթս մեջ  
Քեզի հ սմար շատ քննուե ,  
Բոլլ մը ըզմանք , հոլլ մը սենչ ,  
Ծիր-կաթին մը սեւ անուե .



Ինչ որ ունիմ լանջփս սակ,  
 — Բոց ու սարսուռ, հուրք անհուն,  
 Ինչ որ այրող, ինչ որ սաք,  
 — Ամբողջ հրայրքն արեւուն,

Ու ինչ որ իմ հոգուս մեջ  
 Ունիմ, — էթեր անսահման,  
 Խարտեաւ փայլը կիսաօեջ  
 Գարնան լուսնակ գիշերուան .

Ասոնց ամենն, այ աղուոր,  
 Եկո՛ւր, մընջեմ ականջիդ,  
 Ու նայուածովս անսովոր  
 Յօղեմ հոգուդ մեջ վնիս :

Գաղսնի բսեմ, հեղունակ,  
 Ու չիմանայ բող աշխարհ,  
 Նոյն իսկ պայծառ մի լուսնակ  
 Չըլլա՛յ վլայ անբարբառ :

Զի, ո՛վ գիտէ, օր մ'աւա՛ղ,  
 Այս խոսուածներն ես մոռնամ,  
 Ու իմ լանջփին սակ խաղաղ  
 Այս կրակներ սառնանան :

Բայց քէ նոյն իսկ երբ մի օր  
 Չասուիմ քեզի սրտագին,  
 Կ'երգնում յանուն Տիրամօր  
 Թէ այդ գգուտն նայուածփին

Ես չեմ մոռնար փայլն աղու,  
 Անգրբօրեհն, միամիտ,  
 — Նայուածք՝ անուտ մի տղու,  
 Պայծառ ու շերմ ու վնիս :

Եկո՛ւր, անո՛ւտ, կարգա՛ հոն,  
 Նայուածփս մեջ անսուեր,  
 Թէ իմ աչքեր մըրայօն՝  
 Յըսակ եմ ու չեմ սրեր :

### Ծ Ղ Ր Ի Թ

Վերջալոյսը կ'արիւնի . . .  
 Մօտ է գիշերը լռին,  
 Կ'իյնայ ցուտ մը վեհունի,  
 Ու ձայները կը մարին :

Կ'երգէ ծղրիքն անդադրում  
 Առանձնութիւնն իր տխուր,  
 Լռութեան մեջ անհասնում,  
 Ի գո՛ւր կ'երգէ ան, ի գո՛ւր :

Խոր գիշեր է խաւարչփն,  
 Ու ծղրիքի երգերուն  
 Տարսամ վանկերը վերջին՝  
 Խլեր է շունչն հովերուն :



Ժիր ֆերթողի երգն ալ, հոս,  
 Ծղրիքի երգ մ'է նրման  
 Զայն կը կլի բանձրահոս  
 Մուր հոսանք մուսացման:

## Հ Ո Ղ Ա Գ Ո Ր Ծ Ն Ե Ր Ը

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆԻՆ

Աճանապարհի ամպեր, բուխ ամպեր,  
 Հաս գուլաներով մոխրիկի ամպեր,  
 Կապոյտին սաքսամ բարձրութեան մեջէն  
 Դանդաղ շարժումով կ'երբան ու կ'երբան:

Կ'երբան, անբար լուրջ մտածումներ  
 Կեանքի հեզնութեան,  
 Կ'երբան, խոկմունքով ծանրացած բեւեր,  
 Խոնջած սրտութեան:

Դաւեսերուն մեջ լուռ, ամայի,  
 Ուր կը դողայ սարսուղիկ  
 Աճան դալար մը վերջին,  
 Դաւեսերուն մեջ լուռ, անկենդան, ամայի,  
 Հողագործներ կը հերկեն:

Հօյ, հօյ, կը հերկեն դանդաղ գոմեներ,  
 Մկանուտ եզներ,  
 Որոնց մտածկոտ ու լուրջ նայուածքին  
 Պաղած փայլին մեջ,  
 Իրենց անյեզու՝ բայց սրտում հոգին  
 Կ'առնէ ել ել եջ:

Ու պիտի կարծեմ քե գոմեներուն  
 Հոգին ալ գուցէ  
 ձնեռած կեանքի լուին հոգերուն  
 Ա՛լ բնագործէն խոր գիտակից է:  
 Եւ դաւեսերուն լայն, լուռ ամայութեան  
 Ու փռուածքին մեջ,  
 Հողը կը բացուի կուռ արօրին սակ,  
 Հողը՝ քարմ ու գեջ,  
 Ան՝ մեր կեանքին ու մեր մահուան  
 Ծնող արգանդն ու գերեզման:

Արօրներն ալ միօրինակ  
 Չ'ունին մ'ունին, հոին՝ յոգնած սրտունջին  
 Ու խոլներն ալ դիւրաբեկ՝  
 Խելոց մը կը հծծեն մեր ակամջին,  
 Խելոց մը հեգ:

Ու գիտե՞ք դուք, սերմնացանն է այս . . .  
 Դիւցազներգական անգութ սպանում, խուլ  
 միանուլագ  
 Ուժի, յոգնութեան եւ դնդերներու  
 Լուին պատարագ:



Ու կ'ըսեմ ինքնին, գոմեցներն ինչո՞ւ, արդեօք  
 ո՞հ, ինչո՞ւ  
 Այնքան մտածկոտ ու լուրջ եմ այնքան,  
 Գուցէ անոնք ալ նրբին հոգեբու  
 Ալ գիտակ եղան :  
 Ու, հո՛յ, կը հերկեն դանդաղ գոմեցներն,  
 Եւ հուժկու եզներ .  
 Եւ շատ պտղաբեր, գուցէ շա՛տ առատ կ'ըլլայ  
 այս տարին ,  
 Երէ կամենայ Աստուածը բարին . . . :

Բ Ի Թ Ե Ղ Ի Ն Մ Է Ձ Է Ն

Ի՞նչ հե՛տ է դիտել վառ պիտակին  
 Սառեբուն մեջէն՝ արեւն հրավառ  
 Ուր հրաշքներու աշխարհ մը անգին  
 Խօլ ելեւեջներ կ'առնէ օդապար :  
 Քրմայի բեւով կայծեր, սարսուռներ,  
 Կու գան քոչըրիկ բիւրեղին ետեւ,  
 Ու ոսկեփոշի մրնուրտն ի վեր՝  
 Բոց-բիթեռներու բոլլեր լուսաբեւ :  
 Վառ պիտակին բիւր սառնեակներուն  
 Գիւրուրեան մեջէն ի՞նչ հե՛տ եմ բոլոր,  
 Գիւղանքկարներն ու լեռներն հեռուն,  
 Ու վեհ կապոյտին գրմբեթը կըլլոր :

Ու երբ աչքերու բիւրեղը կախարդ  
 Յուզուած շարժումով կը բաժնեմ յուժիկ,  
 Կեանքն ալ ես անով դիտելու հանդարտ  
 Ունենալ կուզեմ պատահանն անուժիկ :

Գ Բ Ի Թ Ե Ո Ն Ի Կ Ը

Յանախ, գարնան մի գիւր,   
 Երբ կողերը լեռներուն  
 Ծիր-կաթինի քոյլ շողեր  
 Կ'ոսկեգոծեն երազուն,

Յայգաքիթեռն աղարծի,  
 Լոյս սենչեբու խօ՛ղ գինով,  
 Կու գայ անդուլ կը յածի,  
 Մոմի պայծառ լեզուին ֆոլ :

Իր օդային բեւերուն  
 Ոսկեփոշի բանուածքին  
 Ամբողջ հմայքն անկայուն՝  
 Ջոնն է մոմի լեզուակին :

Ո՞հ, ի՞նչ ունի, ի՞նչ բա՛ւուն,  
 Յայգաքիթեռն անըտան,  
 Կ'ըղձա՛յ ըմպել լոյսերուն  
 Յոլերն արձաք ու տուեան :



Եւ կամ ապրիլ անվրբար  
 Լոյսի երազն անմեկին ,  
 Անգիտակից , անբայտ  
 Գողջիկ անուրջ ցրնծագին :

Ըմպել լոյսերն ու ըմպել  
 Մոմին պայծառ , ցիրուցան  
 Շառաւիղներն ոսկեփայլ  
 Նրբաճանճանջ ու դեղձան :

Բայց լեզուակին լոյսն համակ  
 Տենչն ըմպելու բիբեռան՝  
 Խանձեց բեւերն ու հարսնեակ  
 Ու երազներն ալ թռան :

\* \* \*

Յանախ գարնան գիշերով  
 Թիբեռն ըլլալ եւ կ'ուզեմ ,  
 Արբիլ մեկ օր լոյսերով ,  
 Երազներու մեջ վրսեմ ,

Եւ ըսպառիլ այդ զեղուն  
 Դիւբուրեան մեջ լուսայած  
 Ու քնանալ Բունն անհուն՝  
 Դեռ երազին չարքրնցած :

## ԱՆԾԱՆՕՔ ՊԱՐՏԷԶԸ

Եկո՛ւր , սանիմ քեզ առտուն ,  
 Եբ մեղմօրէն մըքրնշաղ  
 Երազանքի շունչ մ'անհուն  
 Կը բրբրոյ ալ դեռ խաղաղ ,

Տանիմ պարեկ մ'անձանօք  
 Ծաղիկներու կիսաբաց ,  
 Որոնց հոգին խընկահոս  
 Կ'արտաբուրի ցողամած :

Եւ ուր խարսեաւ Բըսիքէն  
 Ծաղկանց շաղոս թերթերուն  
 Քընփուտ , բալիւ բացուածքէն  
 Թռիչ կ'առնէ շուարուն .

Ո՛հ , դեռ հազիւ կ'աղմըղկէ  
 Մեղմ լոյսերու ծիրանին ,  
 Ու վարդերն ալ գարմանքէ  
 Կես մ'են բացեր աչքերնին :

Չէ՛ , մի՛ վախճար , հեռուն չէ  
 Պարեկն՝ ուրեղ Սերն արթուն  
 Անուտ երգեր կը մընջէ  
 Լայն լուռին սակ ծառերուն :



Հո՛ւս , նայուածքիս մուք լուսին  
Յառե՛ աչքերդ անբքբիք ,  
Հո՛ն է , տե՛ս , խորն այդ սեւին ,  
Պարտեզն ու այգն ու փքբիք :

### ՍԻՐՈՅ ԽՕՍՔԵՐ

Արդեօք ծովո՞ւնն քի երկընթին անյստակ ,  
Շատ նայեցար իդձերուդ մէջ խուսափուկ ,  
Որ աչքերուդ աղու մեղրը կապուտակ  
Այնքան ունի իր մէջ սաւսուռ , սրսփուք :

Այդ նայնւածքի բննուտ , բաւիւ գգուանքեն ,  
Ուր կ'առկայձի փայլը մանուկ իդձերու ,  
Եւ ուր հոգիդ ու սիրդ , անուտ , կ'արձակեն  
Անմեղապարտ ցոլքը տարտաւ սերերու ,

Եւ ուր աղւոր երազներէ արքընցած  
Կոյս հոգիի զմայլանք մը կը ցոլայ ,  
Այդ նայուածքի ջերմութենէն քարմ ու քաջ՝  
Գիտե՛ս , ա՛ղւոր , սքրկօրէն գինովցայ :

Բոլորն ասոնք՝ պիտի չքսեմ եեզ յուեք ,  
Խորհրդափակ լուսութեամբ մը ցաւաբեկ ,  
Ու մքսածկոտ երէ անցնիմ ես փոքր՝  
Աւանդ , պիտի չը հանչն սս դուն գիս երբեք :

Չի դիւքական քաղցրութեան մէջ իմ սիրոյս  
Սեւ հանգոյցը կայ աննշուար բոյներուն ,  
Ու խոհական խսնդաղասանքն իմ անոյս՝  
Իմ մէջ կ'ըլլայ սեր մը լրօին ու բախուն :

### ՄԻԱՆՁՆՈՒՇԻՆ

Տանարին խաղաղ առանձնութեան մէջ  
Ուր լուռ խորհուրդներ կ'առնեն ելեւէջ ,  
Հանդարտ իրիկուտան քոյլ սուտերներէն  
Յրէին սաւսուռ մը կ'իջնույ մեղմօրէն .  
Գորական հսկայ կամարներուն տակ  
Կը տիրապէտէ մեծ լուրք համակ :  
Խունկի , կնդրուկի բոյեր կը բռնին  
Իբր ասուածաւունջ հոգին տանարին :  
Ամէն բան խաղաղ , հանդարտ , սուրբ է հոս  
Ու մենաստանի կեանքով՝ քսուտերոս :

Տիրամօր անուտ պատկերի մ'առջեւ ,  
— Ամենամատուր կին խնդրապարզեւ ,  
Դպկադեմ փոյր կ'աղօթէ խոհուն ,  
Աչքերն՝ արցունքի գոհարով փայլուն ,  
Հոգին՝ հաւաստի սաւսուռով լեցուն ,  
Եւ Յոյսի անուտ բուրմունքով անհուն :  
Աղուտ սքրուկին՝ ձեռքէն իբարու ,



Կ'ըսեմ՝ այս կեանքն հոգեւին հետու ,  
 Տեսիլքն արբեի , վերամբարձ աչով ,  
 Կ'ամբառնայ արժով մեծ փեսային ֆով :  
 Նրբին օրքներէն , ուր վարդի ժգոյն  
 Կարմիրն է ցնդեր երազի հանգոյն ,  
 Յիսուսի սիրուն աղօթքն հոգեունն :  
 Վեր կը խնկանայ յամր ու անմոռուն :  
 Ու պակասեցի այս վեհ պակասերին՝  
 Վերէն հրեօտակներն ալ կը խոնարհին ,  
 Մինչ Տիրամայրն ալ գոգցես հրեռանքէն  
 Անուօ կը ժպտի օղաւթին սակէն :

Կ'աղօթե հանդարտ , կ'աղօթե լոյին ,  
 Սգաւոր լաչակն աղւոր երեսին ,  
 Ճերմակ երեսի՛ւ՝ խոժոռ լաքր սեւ ,  
 Սուրբ Ասուածամօր պակասերին առջեւ ,  
 Բայց ինչո՞ւ դեմքին տեսութեան վրայ՝  
 Անցեալ մ'ալեկո՛ծ դեռ կը քրքոյայ :

Մասաղ է դեռ շատ աղջիկն երազուն՝  
 Ու բարձ է բաւիւն իր աչուկներուն ,  
 Եւ ներանձնացման այս սուգէն անդարձ .  
 Օ՛հ , ի՞նչ կ'ըսպասե սիրեն իր բոցարձարձ .  
 Ու ինչ որ աշխարհ չը տուա իրեն ,  
 Կը խնդրէ արդեօք Յիսուսէն , վերէն :  
 Աղջիկ , այդ նայուածքն իդձով երկնաւոր  
 Յուզուած , կը գգուէ դեմքը Տիրամօր .

Ըսե՛ , Մարիամին ջինջ նայուածքը հեզ  
 Իր գաւկէն բան մը կը խոսանայ՝ ֆեզ :

Դեմքին նըլաղկոտ մաքրութեան վրայ  
 Կը յորդի յուզմունքն ու կը սարսուռայ ,  
 Եւ ներանձնացման մոռացումին մէջ  
 Հոգին՝ կեանքի հուսկ հրքիռով մ'անեօջ ,  
 Տախտակի փոխուած չոր լանջին վրայ  
 Հեւքի մը օւննչով յուճիկ կը քրքոյայ :

Ի՞նչ , մոռնալ կեանքը , ու մոռնալ յաւէտ  
 Ինչ որ իր լանջին ու իր հոգուն սակ  
 Ունի կինն անեօջ , քանձ ու կենսաւէտ ,  
 Ու մոռնալ չափն ուժգնութիւնը սաք :  
 Օ՛հ , ի՞նչպէս ֆանդել գգուտ աչքերուն  
 Բիւր ըղձ սննեւորու ցանցը վառվրոուն ,  
 Ուրանալ ինչ որ բնութիւնն յաւերձ  
 Ունի պարգեւած բուռն , անարամեքձ ,  
 Ինչ որ դիւրական ու գերադրապէս  
 Ունի իգական սիրեն հպարտ ու հեզ . . . :

Տանարին խաղաղ առանձնութեան մէջ ,  
 Ուր սեւ սարսուռներ կ'առնեն ելեւեջ ,  
 Հեզ միանձնուհին , ձեռքերն իրարու ,  
 Կարծես այս կեանքն հոգեւին հետու ,  
 Պակասերին առջեւ Սուրբ Ասուածամորն՝  
 Անուօ ու առատ կ'արտասուէ լրոյն :



## Կ Ը Տ Ո Կ Ա Յ

Թոճախս չ'ըլլար, աւանդ, ու միտ չի մեռնիր  
 Հեզ բանաստեղծն եթէ սիրով հիւրընդնայ.  
 Թեեւ սկար' կը սանջուրի անխորնայ,  
 Բայց միտ, աւանդ, բոճախս չ'ըլլար, չի' մեռնիր:

Մեռնի՛լ, — ինչո՞ւ, ի՛նչ դիւրին բան, ի՛նչ լաւ բան.  
 Պէտք է ապրիլ սիրոյ լեղի կեանքն հեշտին,  
 Ու նաշակել դառն հրեռանքներն այդ կեանքին.  
 Մեռնի՛լ, — ինչո՞ւ, քիչ մ'երկարի բող նաւբան:

Տժգո՛յն տղայ, ջանա՛ ուրեմն յար ժպտիլ,  
 Ու եթէ մերք խոնաւ նայուածիդ երազուն  
 Անդրադառնայ արտիդ ծածուկ վերբերուն,  
 Զըլլայ ՏՏՄԻՍ, — աւանդ, պէտք է յար ժպտիլ:

Հանոյական սանջանքն, աւանդ, պէտք է որ  
 Անդարձօրէն չը վերջանայ, չըսպառի.  
 Լոկ դուն գիտցիր քէ հոն հրդեհ կը վառի,  
 Եւ քէ՛ խաչին ծանր է այս բեռն անաւոր:

Գիտե՛ք, բոճախս չ'ըլլար ու միտ չի մեռնիր,  
 Թէ սերն անյոյս միտուի խոթիս իր արտին,  
 Ու պատուակ' այդ ցաւն՝ իր սեզ տաղանդին,  
 — Մեւ հեզգուրքին, — կ'ըլլայ նաւբան ու փառքն իր:

## Ք Ի Ք Ե Ռ Ը

Անհուն սրտուրբան շեշտով մը հասած,  
 « Զիս պիտի մոռնա՛ս » ըսիր դառնօրէն,  
 Խորունկ նայուածիդ համակրանքը բաց  
 Ուղղելով ինձի շե՛տ, մըսերմօրէն:

Զի գուցէ, աւանդ, շա՛ս փիլիսոփայ  
 Ու շա՛ս գիտնական գտար զիս, աղուո՛ր,  
 Այս անգուր խաղին մեջ ուր կը զոփայ  
 Հոգին մերք յաւե՛ս ու մերք անցաւոր:

Զի ըսեր էի քէ՛ սերն ալ՝ բոլոր  
 Բոցէ կիրքերուն պէս՝ չէր բացարձակ,  
 Առաքինական սուտ մը կեղծաւոր  
 Ու կեղծապարիտ խղճի խաղ մը ծակ:

Ու սրտնեցար դուն յուսանասօրէն,  
 Մըտի մորմոխման հասնումի մը մեջ,  
 « Զիս պիտի մոռնա՛ս » շողողաց նորէն,  
 Տախուկ նայուածիդ փայլը կիսաւեջ:

Զէ՛, իմ պատշելիս, ես եեզ չեմ մոռնար.  
 Գիտունի նաղաս գանկը դեռ չունիմ,  
 Հոգիս՝ հրդեհ մ'է ու սիրս ալ դալար,  
 — Արեալուսային ոսկեթեւ քիթեռ:



Զի ինչ որ ներսս ունեւ եռանդոս ,  
 — Սիրոյ առաջին խունկը խաւարծի ,  
 Մըսիս վարդենիքն ալ անուշահոտ՝  
 Բոյորն ալ՝ պասանդ քեզ նուիրեցի :

Պասանդ կը մընայ մա-նեռուկ մեջ դեռ ,  
 Մըսիս առաջին այս գանձը համայն ,  
 Ու իբր առտուան ոսկեգոծ թիթեռ  
 Բռնած էս քեւէն ու չէս բողուր զայն :

Եւ երբ նոյն իսկ թիթեռը մի օր  
 Խոյս ալ մասնեռեդ ու քոչի հեռուն ,  
 Քեզ պիտի բողու դեռ բան մը , — բողոր-  
 Ոսկեգոծ փոշին իր նուրբ քեւերուն :



### Ք ՈՒ Պ Ա Տ Կ Ե Ր Դ

Վառ գոյներու ժուծկալութեամբ մը հանդարտ ,  
 Ու գիծերու նուրբ արուեստով մ'աննումար ,  
 Մուսաներու մանկլաւիկը սիրահար  
 Գծեց պասկերդ իր սաղերուն մեջ կախարդ :


Մերք երանգի շունչ մը հասած , կամ շոգի ,  
 Անուշներու անգայտ երկրէն գողցուած ,  
 Մերք նըւադման սուրբ մ'անոր է տուած ,  
 — Ամպ քե մարմա՞տ , քե հրեշտա՞կ , քե հոգի՞ :

Ու մերք լոին սրտուրեան մը պէս մթին  
 Պասկերդ այնտեղ քանձ սուրերին կը միտի .  
 Խորհրդապահ անգուր սեւ մը մասիտի՝  
 Ուր գիծերը կու գան խորքէն անդունդին :

Ուրեմն ի՞նչ էս , անո՞ւրջ , սուրբ կամ երբ՞ ,  
 Աննիւրական գաղափա՞ր մը անմեկին .  
 Ո՞հ , ի՞նչ էս դու , յուշկապարի՞կ , հուրի՞ , կի՞ն .  
 Տարտամութեան շղարք մը դեմքդ է պատեր :

Տծգոյն տղան՝ խորհրդապահ վրձինով  
 Դեմքիդ որոշ գոյն մը , գիծ մը չէ տուեր .  
 Կը կասկածի՞ քե՛ երբ շղարքն առնէ վեր  
 Լուռ նախանձ մը կ'այրէ հոգին իր գիւնով :

Է՛հ , բող ըսեն քե լոկ շունչ մ'ես խո՞ւսափուկ ,  
 Իտեալի կապոյտ պարոյր մը քրքուռն .  
 Գուցէ նոյն իսկ գոյուրիւն ալ չունիս դուն .  
 Մտի խաղ մ'ես , անգոյ երազ մը փափուկ :





## Ժ Ա Յ Ռ Ե Ր Ը (\*)

Ո. ՉԱՐԴԱՐԵՍՆԻՆ

Ա.

Սա ժայռեր՝ որոնց վրայ բազմները կը նախերեն ,  
 Ուր՝ օձերը՝ գալարուն՝ կը սողան ու կը սուլեն ,  
 Ու մամուռներ վաքքուելով անոնց խիզախ կողե-  
 Գորե կանանչ մը կ'երանգեն , [բուն ,  
 Ասեմօք ,

Աւանդութիւն մը կ'ըսէ ,  
 Այդ ժայռեր՝ մարդէր էին մեզ պէս՝ միսէ :

Անյիշատակ օրեր առաջ օր մը , հոն ,  
 Խոպան ու չոր այդ ամալի վայրերէն ,  
 Հպարտ ամբոխ մը կ'անցներ ,  
 — Հարսնելու խուժան մը՝ երկիրներէ հեռաւոր :  
 Ու բմբուկին , դափին ձայնը յաղթական ,  
 Երգողներուն , ծննդաներուն հնչիւնն անուշ ,  
 Եւ շողիւններն զգեստներուն երփներանգ ,  
 Դեպի հեռուն , կ'երկրնային դաշին մեջ :  
 Հարսն ալ՝ ֆոլիին սակ ծածկուած՝  
 Իր գեղն՝ ամուր կը պահէր :

(\*) Այս պալլասը հանած եմ Ռուբէն Չարգարեան բարե-  
 կամիս շրտս ու պատկերալից արձակէն՝ որուն պէտք է վերա-  
 դարձնել արժանիքի լաւագոյն բաժինը :

Յանկարձ , սակայն , անզուսպ փափագ մը՝ հարսին  
 Կ'ուռեցընէ սիրքը՝ որ դեմքը բանայ ,  
 Ու բարբարոս , վայրի սիրով մը ուժգին ,  
 Այս անձանօք , այս ամալի վայրերուն՝  
 Հանդիսադրէ գեղեցկութիւնն իր բրբունն :

Ու նետելով իր ֆոլն անդին՝  
 Հոն ցոյց կու տայ կուսական չքնաղ դեմք մը՝ Արեւիկն :

Այլ բընութիւնը զայրացած  
 Ամբարսաւան գեղեցկութեան այս ցոյցէն ,  
 Այդ ամբոխը կ'անիձէ իր շանքերուն  
 Անեծֆներովն անկարեկիր ,  
 Ու բոլորն ալ քար կը դառնան , կը սառին՝  
 Գամուած , անշարժ ու լըռին :

Բ.

Հիմակ , այն տեղ , սպասումով մտական ,  
 Այդ ժայռերը , — սառած մարդեր , — կ'ըսպասեն :  
 Կը նշարուին այն տեղ շփոք , աւրուած ,  
 Ու խանգարուն դիմագծեր բազմաքիւ ,  
 Մանուկներու , պարմաններու , պառաւի :  
 Վայրագ աչքեր կան , անտեղի սեւեռմամբ ,  
 Ու մոլեգին կիրճով մը բաց մընացած ,  
 Ու կծկըւած , խորեմած երեւոյթներ դիւահար ,  
 Որ կը բուր պիտի լային՝ ու չեն լար .  
 Ցաւ մը անհուն կը յայտնուի համօրէն ,  
 Որ այդ պահուն սանջեց զանոնք ուժգնօրէն :



Սեղմ կամ անջաս, կամ իրարու խոնուս՝  
 Էակներ են անոնք բոլոր՝ որ սակայն,  
 Առասպելի զոյցեն դուրս ցոյց կուսան  
 Շարք մը ժառուր պասկերներու իրական,  
 Խօյ, խուսափուկ նմանութեամբ մը գծուած :

Ու դեռ հոն են, — անոնք յաւէս,  
 Պիտի մընան դեռ այն սեղ,  
 Արշալոյսի Արեւին սակ ձիւնաւէս,  
 Կամ իրիկուան ցոլերուն մէջ ոսկեհեղեղ :

Պ.

Աւանդութիւնն՝ այդ հեզ խումբին պատմութեան՝  
 Այդ ժայռերուն, այդ քարերուն մէջ ցրտին՝  
 Մխիթարող ջերմ հաւասք մըն է դրամ  
 — Այսօր՝ այն սեղ ուխտավայր մ'է զօրաւոր :

Հոն՝ հիւանդներ, ցաւագարներ,  
 Ու կիները մանաւանդ,  
 Ապաւեհի մը հուսկ յոյսովը սժգոյն,  
 Իրենց հոգուն սառապաններն անանուն  
 Կը բերեն այս քարերուն,  
 Այս ցուրտ, այս լուռ, այս անզգայ ժայռերուն,  
 Ու պատելի հաւասքով մը միամիտ,  
 Հոն կը վառեն մոմ մը վիտի,  
 Ու գոհունակ՝ էտ կը դառնան :

Ու ժայռերը միտ յոխորտ ու խիզախ,  
 Հպարտ գլուխին երկինք կ'երկարեն,  
 Ուր մերք մերք, զարնան, ձիւնափայլ ամպի  
 Ժանեակներ քեքել պահ մը կանգ կ'առնեն :

Վերը, անոնց ծեղկերուն մէջ  
 Վայրի բուզեր, կանանչ բուփեր կը բուսնին,  
 Ու կայծակը կը զարնուի երբեմն անոնց  
 Ու կտորներ կը բրջընէ :

Մռայլ օրերուն, անձրեւի ասեմ,  
 Ագռաւներն այնսեղ սո՛ւր կը կոնչեն,  
 Եւ լերկ ու ցամքած այդ լերկ կողերէն  
 Կը սողայ հեղեղն  
 Իծերու մըռայլ ու սեւ կարաւան :  
 Հովն ալ կը վազէ շաշելով ուժգին՝  
 Սարին վերեւէն :

Եւ անցորդին նայուածքը մերք  
 Վեր կ'ուղղուի անաբեկ,  
 Ու վրդոված յուզմունքով  
 Կը հարցընէ ան ինքնին,  
 Թե՛ իրա՛ւ այս ցուրտ քարերը  
 Մարդ եղած են ասեմով,  
 Ու քե՛ կեանքը երբեմն անոնց  
 Մէջն ալ պահ մը սաքցած է,  
 Սա քարերը՝ որոնց վրայ անհամար  
 Թռչուններու փետուրներ կան հողմավար :



## ՍԻՐՈՅ ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

Ոգեպատշուրեան հընարեն այն բոլոր՝  
 Խոյ բանաստեղծի խաղերով լեցուն ,  
 Որուն ձգսեցայ ես մսամոլոր  
 Հեռ վերացումի սենչով մը անհուն ,

Ուր ծիածանէ լայնածալ ու նուրբ  
 Մուսիկնէ բեթել պլուզին մեջ բոյլ  
 Շուրջըդ կը ծաղկէր լայն կապոյտ մը սուրբ ,  
 Ու շողողափայլ լոյսերու մի բոյլ ,

Անուրջի անհուն դղեակն սպիտակ  
 Զոր ֆեզի տուի ես բընակավայր ,  
 Ծաղկաւեռ որանն ու երկինն յսակ  
 Ուր , — մտիս մեջ , — դուն հանգիստ ապրեցար ,

Այդ հեռացումը , շոգիայումն այդ  
 Մտի հիգերով հիւսուած վիպակին ,  
 Ուր հեզգիտէ դուն եղար անյայտ՝  
 Հանգոյն ասուպի բոյոտ վիժանքին ,

Բոլոր դիւրութիւնն այս գեղադրուագ  
 Հին ժամանակի լոյս-հեքեարներուն ,  
 Ես շինեցի զայն՝ ո՛չ բէ պատրուակ ,  
 Այլ՝ սիրոյս ամբողջ սկզբունքն անհուն :

Բայց չէ՛ , ես կ'ըզգամ այսօր բէ , ափսոս ,  
 Այդ վերացումը՝ պատշաճ մըն է լոկ ,  
 Եւ սիրեն՝ իղձերովն իր առաստառ  
 Դեռ ունի բախուն սարսուռ ու մարմոք :

Հըրեղէն կիրքի բոցեր կան այնտեղ  
 Ո՛չ նուազ անուռ , մահուր՝ ո՛չ նուազ ,  
 Զգացման գանձեր , յորդ , լուսանեղեղ ,  
 Քերթողի ուժգին յուզմամբ՝ անպակաս :

Համբոյրի հուրն է ան՝ վարդամման  
 Շքանց թաւիւրն բոլորը սահող ,  
 Ու շունչը բերնին , — սիրոյ խնկաման ,  
 Ու բոցն աչկերուն՝ վաս , լուսաբողբող :

Զեռփի սեղմումն է այն՝ գուրգուրագին ,  
 Խանդաղասանով , կ'սրոտով անհուն ,  
 Ուր տեղ մով կ'ըլլայ , կը վառի հոգին ,  
 Վայելքի անուռ բուլուրեամբ լեցուն :

Զէ՛ , ա՛յ վա՛ր թուր ու ֆովըս եկո՛ւր ,  
 Տե՛ս բէ ֆեզ որչա՛փ կը սիրեմ ուժգին ,  
 Ու բարեկամի ձեռնովըդ մահուր՝  
 Գուռէ՛ երազներն իմ տենդոտ նակսին :



## Վ Ե Ր Չ Ա Լ Ո Յ Ս Ի Ա Ղ Ջ Ի Կ Ը

Քրննու զեղութեան փրթումի մը մեջ  
Յայգածաղկի պէս բացուած ամշկոս,  
Իբրեւ թէ՛ ցօղի համբոյրովը՝ գեջ,  
Ու սիրով արբօն, սիրով խնկահոս,

Վերջալոյս նայող պատուհանին լայն  
Ու խորհրդաւոր տարտամ բացուածքին  
Նարսեաւ աղջիկը՝ նըսած լուելայն  
Կը դիտէ խաղաղ շեջն արեւմուտքին:

